



ԱՐԴԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հավասար հնարավորություն
բոլորի համար



ԱՄՆ Բնակարանային և Քաղաքային Ջարգացման
դեպարտամենտ
Արդար բնակարանային և հավասար հնարավորության
գրասենյակ

Խնդրում ենք այցելել մեր վեբկայք՝ www.hud.gov/fairhousing





Արդար բնակարանային ապահովում՝ հավասար ինարավորություն բոլորի համար

Ամերիկյան ամեն կերպ ինարավորությունների հավասարություն է ներկայացնում բոլորի համար: Իր քաղաքացիների հարուստ բազմազանությունը և մեզ բոլորիս կապող միասնության ոգին խորհրդանշում է ազատության և արդարության սկզբունքները, որոնց վրա է հիմնադրվել այս ազգը: Ահա թե ինչու ծայրահեղ մտահոգիչ է, երբ նոր ներգաղթյալները, փոքրամասնությունները, երեխաներով ընտանիքները և հաշմանդամություն ունեցող անձիք անօրինական խտրականության պատճառով մերժվում են իրենց բնակարանային ընտրության ինարավորությունից:

Բնակարանային և քաղաքային զարգացման դեպարտամենտը (Department of Housing and Urban Development, HUD) կիրարկում է Արդար բնակարանային ապահովման մասին օրենքը, որն արգելում է ցուցաբերել մարդկանց հանդեպ խտրականություն և սպառնալիք՝ նրանց տներին, բազմաբնակարան շենքերին և համատիրությանն առնչվող համարյա բոլոր բնակարանային գործարքներում, ներառյալ՝ կացարանների վարձակալությունը, վաճառքը և հիփոթեքային վարկի տրամադրումը:

Բնակարանային վարձակալության և գույքի սեփականատիրության ինարավորությունների հավասար մատչելիությունը հանդիսանում է այս ազգի բնակարանային ապահովման դաշնային քաղաքականության հիմնաքարը: Բնակարանային ապահովման մատակարարներն, ովքեր հրաժարվում են տները վարձու տալ կամ վաճառել մարդկանց՝ նրանց ռասայի, գույնի, ազգային ծագման, կրոնի, սեռի, ընտանեկան կարգավիճակի կամ հաշմանդամության պատճառով, խախտում են դաշնային օրենքը, և HUD-ը վճռականորեն հետամուտ կլինի նրանց դեմ հարկադրական գործողությունների:

Բնակարանային խտրականությունը ոչ միայն անօրինական է, այլ նաև այն ամեն ձևով հակասում է ազատության և ինարավորության սկզբունքներին, որոնք մենք թանկ ենք գնահատում՝ որպես ամերիկացիներ: HUD-ը հանձնառու է երաշխավորել, որ ամեն ոք, ով փնտրում է «տուն» կոչվող վայր, կարժանանա հավասար վերաբերմունքի:

Բովանդակություն

Արդար բնակարանային ապահովման մասին օրենք	1
Ի՞նչ է ընդգրկում բնակարանային ապահովումը.....	1
Ի՞նչ է արգելվում.....	1
Հավելյալ պաշտպանություն՝ հաշմանդամության դեպքում.....	3
Երեխաներով ընտանիքների բնակարանային պաշտպանություն.....	4
Եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները ռսնահարվել են.....	6
Ի՞նչ կպատահի, երբ Դուք բողոք ներկայացնեք.....	9
Ի՞նչ կպատահի, եթե վտարման կամ վաճառքի միջոցով կորցնեմ	
Իմ կացարանը.....	11
Ի՞նչ կպատահի բողոքը հետաքննելուց հետո.....	11
Ի հավելումս.....	13



ԱՐԴԱՐ ԲԱՍՎԱՐԱՆԱՅԵՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Հափստար հնարավորություն բոլորի համար

Արդար բնակարանային ապահովման մասին օրենք

Արդար բնակարանային ապահովման մասին օրենքն արգելում է բնակարանային խտրականությունը հիմնված՝

- ռասայի
- ազգային ծագման
- կրոնի
- սեռի
- ընտանեկան կարգավիճակի (ներառյալ՝ ծնողների կամ խնամակալների հետ ապրող 18 տարեկանից փոքր երեխաները, հղի կանայք և 18 տարեկանից փոքր երեխաների խնամակալությունն ապահովող անձիք)
- հաշմանդամության վրա

Ի՞նչ է ընդգրկում բնակարանային ապահովումը

Արդար բնակարանային ապահովման մասին օրենքն ընդգրկում է բնակարանային ապահովման մեծ մասը: Որոշ հանգամանքներում օրենքը կիրառվում էսեփականատիրոջ կողմից զբաղեցված ոչ ավել քան չորս փավոր ունեցող շենքերի, մեկ ընտանիքի համար նախատեսված կացարանի առանց փջնորդի վաճառքի կամ վարձակալության դեպքում, ինչպես նաև կազմակերպությունների և մասնավոր ակումբների կողմից օգտագործվող բնակարանների, որոնք անդամների զբաղեցման սահմանափակում ունեն:

Ի՞նչ է արգելված

Բնակարանների վաճառքի և վարձակալության ժամանակ. Ոչ ոք չի կարող ստորև ներկայացված գործողություններից որևէ մեկը ձեռնարկել՝ ռասայի, գույնի, կրոնի, սեռի, հաշմանդամության, ընտանեկան կարգավիճակի կամ ազգային ծագման հիման վրա.

- Մերժել վարձու տալ կամ վաճառել կացարանը
- Մերժել բանակցել կացարանի համար
- Կացարանն անհասանելի դարձնել
- Այլապես մերժել բնակարանը
- Կացարանի վարձառքի կամ վարձակալության համար տարբեր կանոններ, պայմաններ և առավելություններ սահմանել
- Տարբեր բնակարանային ծառայություններ և հարմարություններ տրամադրել
- Կեղծ ժխտել, որ բնակարանը ենթակա է ստուգման, վաճառքի կամ վարձակալության

- Շահույթի համար համոզել կամ փորձել համոզել տան սեփականատիրոջը վաճառել կամ վարձու տալ կացարանները՝ առաջարկելով, որ որոշակի ռասայի մարդիկ տեղափոխվել են կամ պատրաստվում են տեղափոխվել հարևանությամբ (սպեկուլյացիա) կամ
- Մերժել որևէ անձի մատչել, անդամակցել կամ մասնակցել որևէ կազմակերպության, հաստատության կամ ծառայության (օրինակ՝ բազմակի ցանկով ծառայություն) գործունեությանը, որոնք կապված են կացարանների վաճառքի կամ վարձակալության հետ, կամ որևէ անձի հանդեպ խտրականություն ցուցաբերել՝ նման մատչելիության, անդամակցության կամ մասնակցության կանոններում և պայմաններում:

Հիփոթեքային վարկի տրամադրման ժամանակ. Ոչ ոք չի կարող ստորև ներկայացված գործողություններից որևէ մեկը ձեռնարկել՝ ռասայի, գույնի, կրոնի, սեռի, հաշմանդամության, ընտանեկան կարգավիճակի կամ ազգային ծագման հիման վրա.

- Մերժել հիփոթեքային վարկի տրամադրումը
- Հրաժարվել տրամադրել տեղեկատվություն՝ հիփոթեքային վարկի վերաբերյալ
- Պարտադրել տարբեր կանոններ և պայմաններ հիփոթեքային վարկի համար, ինչպիսիք են՝ տարբեր վարկային տոկոսադրույքներ, փափոքներ կամ սակագներ
- Խտրականություն՝ գույքը գնահատելիս
- Մերժել ձեռք բերել վարկ կամ
- Տարբեր կանոններ և պայմաններ սահմանել վարկը ձեռք բերելիս Ի հավելումս՝ Արդար բնակարանային ապահովման մասին օրենքի խախտում է՝
- Սպառնալը, հարկադրելը, վախեցնելը կամ միջամտելը որևէ մեկին, ով իրականացնում է արդար բնակարանային իրավունք կամ օգնում է այլոց իրականացնել այդ իրավունքը
- Պատրաստել, տպել կամ հրապարակել կացարանի վաճառքի կամ վարձակալության հետ կապված որևէ հայտարարություն, որը ցույց է տալիս նախապատվություն, սահմանափակում կամ խտրականություն՝ հիմնված ռասայի, գույնի, կրոնի, սեռի, հաշմանդամության, ընտանեկան կարգավիճակի կամ ազգային ծագման վրա: Խտրական գովազդի դեմ այս արգելքը վերաբերվում է մեկ ընտանիքի համար նախատեսված և սեփականատիրոջ կողմից զբաղեցված կացարանին, որն այլապես ազատված է Արդար բնակարանային ապահովման մասին օրենքով:
- Մերժել կացարանի համար տրամադրել տանտիրոջ ապահովագրություն՝ սեփականատիրոջ և/կամ կացարանը զբաղեցնողների ռասայի, գույնի, կրոնի, սեռի, հաշմանդամության, ընտանեկան կարգավիճակի կամ ազգային ծագման պատճառով
- Խտրականություն ցուցաբերել կանոններում և պայմաններում՝ սեփականատիրոջ և/կամ կացարանը զբաղեցնողների ռասայի, գույնի, կրոնի, սեռի, հաշմանդամության, ընտանեկան կարգավիճակի կամ ազգային ծագման պատճառով



- Մերժել տանտիրոջ ապահովագրական ծածկույթի առաջարկվող տարբերակների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրել՝ սեփականատիրոջ և/կամ կացարանը զբաղեցնողների ռասայի և այլնի պատճառով
- Պատրաստել, տպել կամ հրապարակել տանտիրոջ ապահովագրական ծածկույթի տրամադրման հետ կապված որևէ հայտարարություն, որը ցույց է տալիս նախապատվություն, սահմանափակում կամ խտրականություն՝ հիմնված ռասայի, գույնի, կրոնի, սեռի, հաշմանդամության, ընտանեկան կարգավիճակի կամ ազգային ծագման վրա:

Հավելյալ պաշտպանություն՝ հաշմանդամության դեպքում

Եթե Դուք, կամ Ձեզ առնչվող որևէ մեկը՝

- Ունի ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն (ներառյալ՝ լսողության, շարժունակության և տեսողության խանգարումներ, քաղցկեղ, քրոնիկական մտավոր հիվանդություն, ՄԻԱՎ/ՁԻԱՀ (HIV/AIDS) կամ մտավոր հետաժառանգություն), որն էապես սահմանափակում է մեկ կամ ավել հիմնական կենսագործունեություն
- Ունի նման հաշմանդամության մասին արձանագրություն
- Դիտարկվում է որպես նման հաշմանդամություն ունեցող, ապա բնակարան ապահովողը չի կարող՝
 - Մերժել Ձեզ՝ Ձեր կացարանում կամ ընդհանուր օգտագործման տարածքում Ձեր ծախսերով կատարել ողջամիտ ձևափոխություններ, եթե դա անհրաժեշտ է Ձեր կացարանը լիարժեքորեն օգտագործելու համար: (Որտեղ ողջամիտ է, տանտերը կարող է թույլատրել փոփոխություններ կատարել, միայն եթե Դուք համաձայնեք տունը հանձնելիս, գույքը վերականգնել իր սկզբնական վիճակի:)
 - Մերժել ողջամիտ հարմարեցումներ անել կանոններում, քաղաքականություններում, գործելակերպերում կամ ծառայություններում, եթե անհրաժեշտ լինի հավասար պայմաններում կացարանն օգտագործել ոչ հաշմանդամ մարդկանց հետ:

Օրինակ՝ «Ընտանի կենդանիներ արգելող» քաղաքականությամբ շինությունը պետք է տեսողական խնդիրներ ունեցող վարձակալներին թույլատրի ուղեկցող շուն ունենալ:

Օրինակ՝ Բնակարանային համալիրը, որը վարձակալներին առաջարկում է ընդարձակ և չզբաղեցված ավտոկայանատեղի, պետք է հարգի շարժունակության խնդիրներ ունեցող վարձակալների խնդրանքը՝ վերապահել տարածք իր բնակարանին մոտ, եթե անհրաժեշտ լինի հավաստիացնել, որ նա կարող է մուտք գործել իր բնակարանը:

Այնուամենայնիվ, Արդար բնակարանային ապահովման մասին օրենքը չի պաշտպանում այն անձին, ով ուղղակի սպառնալիք է հանդիսանում այլ անձանց առողջության և անվտանգության համար, և ով ներկայումս ապօրինի թմրանյութ է օգտագործում:

Նոր բազմաբնակարան շենքերի մատչելիության պահանջները. Չորս և ավելի միավորներ ունեցող շենքերում, որոնք առաջին անգամ զբաղեցվել են 1991թ. մարտի 13-ից հետո, և որոնք վերելակ ունեն՝

- Հանրային և ընդհանուր օգտագործման տարածքները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար
- Բոլոր դռները և միջանցքները պետք բավականաչափ լայն լինեն՝ անվասայլակների համար
- Բոլոր միավորները պետք է ունենան՝
 - Մատչելի ճանապարհ՝ դեպի միավորը և դրա միջև
 - Մատչելի լույսի անջատիչներ, էլեկտրական վարդակներ, ջերմամեկուսիչներ և շրջակա միջավայրի պահպանության վերահսկման այլ միջոցներ
 - Լոգասենյակի երկաթբետոնե պատեր, որոնք հետագայում թույլ կտան ճաղաշարք տեղադրել և
 - Խոհանոցներ և լոգասենյակներ, որոնք հնարավոր կլինեն օգտագործվել անվասայլակներով անձանց կողմից

Եթե չորս կամ ավելի միավոր ունեցող շենքը վերելակ չունի և առաջին անգամ զբաղեցվել է 1991թ. մարտի 13-ից հետո, այս չափանիշները վերաբերվում են միայն առաջին հարկին:

Նոր բազմաբնակարան շենքերի համար մատչելիության այս պահանջները չեն փոխարինում Նահանգային կամ տեղական օրենքով նախատեսված մատչելիության ավելի խիստ չափանիշներին:

Երեխաներով ընտանիքների բնակարանային պաշտպանություն

Արդար բնակարանային ապահովման մասին օրենքի համաձայն անօրինական է համարվում խտրականություն ցուցաբերել այն անձի հանդեպ, ում տնային տնտեսությունում կա 18 տարեկանից փոքր մեկ կամ մի քանի երեխա (ընտանեկան կարգավիճակ): Ընտանեկան կարգավիճակի պաշտպանությունն ընդգրկում է այն տնային տնտեսությունները, որտեղ մեկ կամ մի քանի անչափահաս երեխաներ ապրում են՝

- Ծնողի,
- Անձի, ով հանդիսանում է անչափահաս երեխայի կամ երեխաների օրինական խնամակալը (ներառյալ՝ հոգաբարձությունը), կամ

- Ծնողի կամ օրինական խնամակալի կողմից գրավոր թույլտվությամբ՝ ծնողի կամ օրինական խնամակալի կողմից նշանակված անձի հետ:

Ընտանեկան կարգավիճակի պաշտպանությունը տարածվում է նաև հղի կանանց և անչափահաս երեխայի օրինական խնամակալության անվտանգությունն ապահովող ցանկացած անձի վրա (ներառյալ՝ որդեգրած կամ խորթ ծնողները):

«Ծերերին բնակարանային ապահովման» ազատում: Արդար բնակարանային ապահովման մասին օրենքը մասնավորապես որոշ մեծահասակ բնակֆոնդի և համայնքների ազատում է ընտանեկան կարգավիճակի խտրականության համար պատասխանատվությունից: Մեծահասակ բնակֆոնդի և համայնքների ազատումը կարող է օրինական կերպով մերժել կացարանները վաճառել կամ վարձու տալ անչափահաս երեխաներով ընտանիքներին: «Ծերերին բնակարանային ապահովման» ազատման համար որակավորվելու նպատակով բնակֆոնդը կամ համայնքը պետք է ապացուցի, որ իր կացարանը հանդիսանում է՝

- Տրամադրված՝ որևէ Նահանգային կամ Դաշնային ծրագրի համաձայն, որ HUD-ի որոշմամբ այն առանձնահատուկ կերպով նախագծված է և գործում է՝ օժանդակելու համար մեծահասակ մարդկանց (Նահանգային կամ դաշնային ծրագրով սահմանված կարգով) կամ
- Նախատեսված և օգտագործված՝ բացառապես 62 և ավելի տարիք ունեցող անձանց կողմից, կամ
- Նախատեսված և զբաղեցման համար օգտագործված՝ 55 և ավելի տարիք ունեցող անձանց կողմից:

«55 կամ ավելի մեծ» որակավորվելու համար բնակարանային ապահովման ազատումը, բնակֆոնդը և համայնքը պետք է բավարարեն հետևյալ պահանջներից յուրաքանչյուրին.

- միավորների նվազագույնն 80 տոկոսը պետք է ունենա 55 և ավելի տարեկան առնվազն մեկ զբաղեցնող,
- բնակֆոնդը կամ համայնքը պետք է հրապարակեն և հավատարիմ ժամանակ քաղաքականություններին և ընթացակարգերին, որոնք ցույց են տալիս «55 կամ ավելի մեծ» բնակարանային ապահովման մտադրություն, և
- բնակֆոնդը կամ համայնքը պետք է համապատասխանեն HUD-ի՝ բնակիչների տարիքի ստուգման կանոնակարգող պահանջներին:

«Ծերերին բնակարանային ապահովման» ազատումը մեծահասակ բնակֆոնդերին և համայնքներին ռասայի, գույնի, կրոնի, սեռի, հաշմանդամության, ընտանեկան կարգավիճակի կամ ազգային ծագման վրա հիմնված խտրականություն համար պատասխանատվությունից չի պաշտպանում:

HUD-ը պատրաստ է օգնել բնակարանային խտրականության ցանկացած խնդրի դեպքում: Եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները ոտնահարվել են, կարող եք բողոք ներկայացնել առցանց, Ձեզ ամենամոտ գտնվող HUD-ի գրասենյակ նամակ գրել կամ զանգահարել: Դուք կարող եք HUD-ին բողոքը ներկայացնել վկայակոչված խտրականության դեպքից հետո մեկ տարվա ընթացքում, սակայն պետք է դա անեք որքան հնարավոր է շուտ:

ԵԹԵ ԿԱՐԾՈՒՄ ԵՔ, ՈՐ ՁԵՐ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԸ ՈՏՆԱՀԱՐՎԵԼ ԵՆ

Ինչ ասել HUD-ին.

- Ձեր անունը և հասցեն
- Այն անձի անունը և հասցեն, ում դեմ Դուք բողոք եք ներկայացրել (պատասխանող)
- Գործում ներգրավված կացարանի հասցեն կամ այլ նույնացում
- Վկայակոչված խտրականության համառոտ նկարագրություն (իրադարձությունը, որը պատճառ է հանդիսացել, որ Դուք կարծեք, թե Ձեր իրավունքները ոտնահարվել են)
- Վկայակոչված ոտնահարման ամսաթիվը(թվերը)

Ուր գրել կամ զանգահարել. Բողոք ներկայացրեք առցանց, նամակ գրեք Ձեզ ամենամոտ գտնվող HUD-ի գրասենյակ կամ, եթե ցանկանաք, կարող եք ուղղակիորեն այդ գրասենյակ զանգահարել: Խույզ կամ թույլ լսողություն ունեցող և TTY օգտագործող անձիք կարող են այդ գրասենյակներ զանգահարել Դաշնային տեղեկատվական հերթապահ ծառայության անվճար 1-800-877-8339 հեռախոսահամարով:

Կոնեկտիկուտ, Մեն, Մասաչուսեթս, Նյու Հեմփշիր, Ռոդ Այլենդ և Վերմոնտ նահագների համար՝

ԲՈՍՏՈՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
(Complaints_office_01@hud.gov)

U.S. Department of Housing and Urban Development
Thomas P. O'Neill Jr. Federal Building
10 Causeway Street, Room 321
Boston, MA 02222-1092

Հեռախոս՝ (617) 994-8300 կամ 1-800-827-5005
Ֆաքս՝ (617) 565-7313 * TTY (617) 565-5453

Նյու Ջերսիի, Նյու Յորքի, Պուերտո Ռիկոյի և ԱՄՆ Վիրջին Այլենդի համար՝
ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
(Complaints_office_02@hud.gov)

U.S. Department of Housing and Urban Development
26 Federal Plaza, Room 3532
New York, NY 10278-0068
Հեռախոս՝ (212) 542-7519 կամ 1-800-496-4294
Ֆաքս՝ (212) 264-9829 * TTY (212) 264-0927

Դեկավերի, Կոլումբիայի շրջանի, Մերիլենդի, Փենսիլվանիայի, Վիրջինիայի և
Վեստ Վիրջինիայի համար՝
ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ (Complaints_office_03@
hud.gov)
(Complaints_office_03@hud.gov)
U.S. Department of Housing and Urban Development
The Wanamaker Building
100 Penn Square East
Philadelphia, PA 19107-9344
Հեռախոս՝ (215) 861-7646 կամ 1-888-799-2085
Ֆաքս՝ (215) 656-3449 * TTY (215) 656-3450

Ալաբամայի, Ֆլորիդայի, Ջորջիայի, Կենտուկիի, Միսսիսիպիի, Նյուսիսսայն
Կարոլինայի, Հարավային Կարոլինայի և Թենեսիի համար՝
ԱՏԼԱՆՏԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
(Complaints_office_04@hud.gov)
U.S. Department of Housing and Urban Development
Five Points Plaza
40 Marietta Street, 16th Floor
Atlanta, GA 30303-2808
Հեռախոս՝ (404) 331-5140 կամ 1-800-440-8091 x2493
Ֆաքս՝ (404) 331-1021 * TTY (404) 730-2654

Իլինոիսի, Ինդիանայի, Միչիգանի, Մինեսոտայի, Օհայոյի և Վիսկոնսինի
համար՝
ՉԻԿԱԳՈՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
(Complaints_office_05@hud.gov)
U.S. Department of Housing and Urban Development
Ralph H. Metcalfe Federal Building
77 West Jackson Boulevard, Room 2101
Chicago, IL 60604-3507
Հեռախոս՝ 1-800-765-9372
Ֆաքս՝ (312) 886-2837 * TTY (312) 353-7143

Արկանզասի, Լուիզիանայի, Նյու Մեքսիկոյի, Օկլահոմայի և Թեքսասի համար՝
ՖՈՐՏ ՈՒՈՐԹԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

(Complaints_office_06@hud.gov)

U.S. Department of Housing and Urban Development

801 Cherry Street

Suite 2500, Unit #45

Fort Worth, TX 76102-6803

Հեռախոս՝ (817) 978-5900 կամ 1-888-560-8913

Ֆաքս՝ (817) 978-5876/5851 * TTY (817) 978-5595

Այովայի, Կանզասի, Միսուրիի և Նեբրասկայի համար՝

ԿԱՆԶԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

(Complaints_office_07@hud.gov)

U.S. Department of Housing and Urban Development

Gateway Tower II

400 State Avenue, Room 200, 4th Floor

Kansas City, KS 66101-2406

Հեռախոս՝ (913) 551-6958 կամ 1-800-743-5323

Ֆաքս՝ (913) 551-6856 * TTY (913) 551-6972

Կոլորադոյի, Մոնտանայի, Հյուսիսային Դակոտայի, Հարավային Դակոտայի,
Յուտայի և Վայոմինգի համար՝

ԴԵՆՎԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

(Complaints_office_08@hud.gov)

U.S. Department of Housing and Urban Development

1670 Broadway

Denver, CO 80202-4801

Հեռախոս՝ (303) 672-5437 կամ 1-800-877-7353

Ֆաքս՝ (303) 672-5026 * TTY (303) 672-5248

Արիզոնայի, Կալիֆոռնիայի, Հավայիի և Նևադայի համար՝

ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

(Complaints_office_09@hud.gov)

U.S. Department of Housing and Urban Development

600 Harrison Street, Third Floor

San Francisco, CA 94107-1387

Հեռախոս՝ 1-800-347-3739

Ֆաքս՝ (415) 489-6558 * TTY (415) 489-6564

Այլասկայի, Այդահոյի, Օրեգոնի և Վաշինգտոնի համար՝

ՄԻԵԹԼԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

(Complaints_office_10@hud.gov)

U.S. Department of Housing and Urban Development

Seattle Federal Office Building

909 First Avenue, Room 205

Seattle, WA 98104-1000

Հեռախոս՝ (206) 220-5170 կամ 1-800-877-0246

Ֆաքս՝ (206) 220-5447 * TTY (206) 220-5185

Եթե Ձեզ ամենամոտ գտնվող տեղական գրասենյակի հետ կապվելուց հետո
Դուք դեռ հարցեր ունեք, ապա կարող եք կապվել HUD-ի հետ.

ԱՄՆ Բնակարանային և քաղաքային զարգացման դեպարտամենտ Արդար
բնակարանային ապահովման և հավասար հնարավորության Գրասենյակ

451 7th Street, S.W., Room 5204

Washington, DC 20410-2000

Հեռախոս՝ 1-800-669-9777

Ֆաքս՝ (202) 708-1425 * TTY 1-800-927-9275

www.hud.gov/fairhousing

Եթե Դուք հաշմանդամ եք, HUD-ը տրամադրում է նաև՝

- TTY հեռախոսահամար՝ խուլ/թույլ լսողություն ունեցող օգտվողների համար (ամենամոտ գտնվող HUD-ի գրասենյակը գտեք վերոհիշյալ ցանկում)
- Թարգմանիչներ, ձայնագրված ժապավեններ և Բրայլի գրատիպով նյութեր
- Աջակցությունը՝ ձևաթղթերը կարդալու և լրացնելու հարցում

ԻՆՉ ԿՊԱՏԱՀԻ, ԵՐԲ ԴՈՒՔ ԲՈՂՈՔ ՀԱՐՈՒՑԵՔ

HUD-ը գրավոր ձևով կծանուցի Ձեզ, որ Ձեր բողոքն ընդունված է
քննվելու՝ համաձայն Արդար բնակարանային ապահովման մասին
օրենքի: HUD-ը նաև՝

- Վկայակոչված ոտնահարողին կծանուցի Ձեր բողոքի
ներկայացման մասին և պատասխանողին թույլ կտա գրավոր
ձևով պատասխանել բողոքին:

- Կհետաքննի Ձեր բողոքը և կորոշի՝ արդյոք կա կամ չկա ողջամիտ պատճառ՝ կարծելու համար, որ պատասխանողը խախտել է Արդար բնակարանային ապահովման մասին օրենքը:
- Ձեզ և պատասխանողին կծանուցի, եթե HUD-ը չկարողանա ավարտել հետաքննությունը Ձեր բողոքը ներկայացնելուց 100 օրվա ընթացքում, ինչպես նաև կտրամադրի հետաձգման պատճառը:

Արդար բնակարանային ապահովման մասին օրենքով հաշտեցում. Բողոքի հետաքննության ընթացքում HUD-ը պարտավոր է Ձեզ և պատասխանողին հնարավորություն տալ կամավոր կերպով լուծելու Ձեր բողոքը Հաշտեցման Համաձայնագրով:

Հաշտեցման Համաձայնագիրը Ձեզ անհատական օգնություն է տրամադրում և պաշտպանում է հանրային շահը՝ կանխելով պատասխանողի կողմից հետագա խտրականությունը: Հաշտեցման Համաձայնագիրը Ձեր և պատասխանողի կողմից ստորագրվելուն և HUD-ի կողմից համաձայնագիրը հաստատվելուն պես՝ HUD-ը կկասեցնի Ձեր բողոքի հետաքննությունը: Եթե հավատացած եք, որ պատասխանողը ոտնահարել և խախտել է Ձեր Հաշտեցման Համաձայնագիրը, ապա պետք է անհապաղ ծանուցեք Ձեր բողոքը հետաքննող HUD-ի գրասենյակին: Եթե HUD-ը որոշի, որ ողջամիտ պատճառ կա կարծելու, որ պատասխանողը խախտել է համաձայնագիրը, ապա HUD-ը կարող է ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտին խնդրել Դաշնային շրջանային դատարանում գործ հարուցել ընդդեմ պատասխանողի՝ համաձայնագրի պայմանները կիրառելու համար:

Բողոքարկման ուղեգրեր նահանգային կամ տեղական հանրային արդար բնակարանային ապահովման գործակալություններ. Եթե HUD-ը հավաստագրեց, որ Ձեր նահանգային կամ տեղական հանրային արդար բնակարանային ապահովման գործակալությունն իրականացնում է քաղաքացիական իրավունքների օրենք կամ արարողություն, որը տրամադրում է իրավունքներ, իրավական միջոցներ և պաշտպանություն, որոնք «էապես հավասար» են Արդար բնակարանային ապահովման մասին օրենքին, ապա՝ HUD-ը պետք է անհապաղ Ձեր բողոքը հետաքննության համար ուղղորդի այդ գործակալություն և ուղեգրի մասին անհապաղ ծանուցի Ձեզ: Նահանգային կամ տեղական գործակալությունը Ձեր բողոքը կհետաքննի «էապես հավասար» նահանգային կամ տեղական քաղաքացիական իրավունքների օրենքի և արարողության համաձայն: Նահանգային կամ տեղական արդար բնակարանային ապահովման գործակալությունը պետք է Ձեր բողոքի հետաքննությունը սկսի HUD-ի ուղեգրից 30 օրվա ընթացքում, կամ HUD-ը կարող է հետաքննության համար առաքել («վերակալտիվացնել»)բողոքն՝ Արդար բնակարանային ապահովման մասին օրենքի համաձայն:

Ի՞նչ ԿՊԱՏԱՀԻ, ԵԹԵ ՎՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԿՈՐՑՆԵՄ ԻՄ ԿԱՅՄԱՐԱՆԸ

Եթե Դուք կարիք ունեք անհապաղ կասեցնելու կամ կանխելու մի լուրջ խնդիր, որը պատճառված է Արդար Բնակարանային Ապահովման Մասին Օրենքի խախտմամբ, ապա հնարավոր է, որ HUD-ը կարողանա աջակցել Ձեզ հենց որ Դուք բողոք ներկայացնեք: HUD-ը կարող է լիազորել ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտին՝ Դաշնային շրջանային դատարանում պատասխանողի դեմ Ժամանակավոր զսպող կարգ հաստատելու համար (Temporary Restraining Order, TRO) միջնորդություն ներկայացնելու, ինչին կհաջորդի HUD-ի հետաքննության արդյունքներից առկա Նախնական կալանքը: Դաշնային դատավորը կարող է TRO կամ Նախնական կալանք սահմանել ընդդեմ պատասխանողի այն դեպքերում, երբ՝

- Բնակարանային իրավունքներին անվերականգնելի (անդառնալի) վնաս կամ վնասվածք է ամենայն հավանականությամբ հասցվում՝ առանց HUD-ի միջամտության, և
- Առարկայական ապացույց կա, որ պատասխանողը խախտել է Արդար բնակարանային ապահովման մասին օրենքը:

Օրինակ՝ Սեփականատերը համաձայնում է վաճառել տունը, սակայն, բացահայտելով, որ գնորդները սևամորթ են, տունը հեռացնում է շուկայից, այնուհետև արագ կերպով այն կրկին հանում է վաճառքի: Գնորդները խտրականության բողոք են ներկայացնում HUD-ին: HUD-ը կարող է լիազորել ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտին դաշնային շրջանային դատարանում ստանալ կալանքի թույլտվություն՝ կանխելու համար սեփականատիրոջ կողմից տան վաճառքն այլ անձանց, փոխել HUD-ը կհետաքննի բողոքը:

Ի՞նչ ԿՊԱՏԱՀԻ ԲՈՂՈՔԸ ՀԵՏԱՔՆՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ողջամիտ պատճառի, խտրականության պատասխանատվության և ընտրության որոշում. Երբ Ձեր բողոքի հետաքննությունն ավարտվի, HUD-ը հետաքննության վերջնական հաշվետվություն կպատրաստի, որը կամփոփի հետաքննության ընթացքում հավաքված ապացույցները: Եթե HUD-ը որոշի, որ ողջամիտ պատճառ կա կարծելու, որ պատասխանող(ներ)ը Ձեր հանդեպ խտրականություն է/են ցուցաբերել, HUD-ը կհրապարակի ողջամիտ պատճառի որոշում և խտրականության պատասխանատվություն ընդդեմ պատասխանող(ներ)ի: Դուք և պատասխանող(ներ)ը պատասխանատվության ծանուցումը ստանալուց հետո ունեք քսան (20) օր՝ HUD-ի Վարչական իրավունքի դատավորի (ALJ) կողմից Ձեր գործի լուսնաբեր կամ Դաշնային շրջանային դատարանում քաղաքացիական դատավարություն սկսելու համար:

HUD-ի Վարչական իրավունքի դատավորի լուսններ. Եթե ո՛չ Դուք, ո՛չ պատասխանողը չեք ընտրում քաղաքացիական դատավարություն սկսել նախքան 20-օրյա Ընտրության Ժամանակահատվածի ավարտը, HUD-ը Ձեր գործի համար HUD ALJ-ի մոտ անհապաղ Լսում կցուցակագրի: ALJ-ի լսումը կընթանա այն բնակավայրում, որտեղ տեղի է ունեցել վկայակոչված խտրականությունը: ALJ-ի լուսնների ընթացքում Դուք և պատասխանող(ներ)ն իրավունք ունեք անձամբ ներկայանալու, ներկայացված լինելու իրավախորհրդատուի միջոցով, ներկայացնելու ապացույցներ, իրականացնելու խաչաձև առերեսումներ և ապացույցներ բացահայտելու նպատակով ծանուցագրեր խնդրելու: HUD-ի փաստաբաններն ALJ-ի լուսնների ընթացքում Ձեզ կներկայացնեն անվճար, սակայն, Դուք կարող եք նաև ընտրել միջամտել գործին և պահպանել Ձեր սեփական փաստաբանին: Լսումների եզրակացության համար HUD ALJ-ն որոշում կհրապարակի՝ օրենքի եզրակացությունների և հայտնաբերված փաստերի հիման վրա: Եթե HUD ALJ-ն եզրակացնի, որ պատասխանող(ներ)ը խախտել է/են Արդար բնակարանային իրավունքի մասին օրենքը, ապա՝ պատասխանող(ներ)ը կարող է/են հարկադրվել՝

- Փոխհատուցել Ձեզ իրական վնասների համար, ներառյալ՝ վատնված ծախսերի և հոգեկան ապրումների վնասները:
- Տրամադրել մշտական դատական օգնություն:
- Տրամադրել համապատասխան արդար օգնություն (օրինակ՝ բնակարանը Ձեզ համար մատչելի դարձնել):
- Վճարել Ձեր փաստաբանի ողջամիտ վճարը:
- Քաղաքացիական տուգանք վճարել HUD-ին՝ արդարացնելու համար հանրային շահը: Առավելագույն քաղաքացիական տուգանքներն են. \$16,000՝ օրենքը խախտելու առաջին դեպքի համար, \$37,500՝ եթե օրենքը խախտելու նախորդ դեպքը տեղի է ունեցել անցած հինգ տարիների ընթացքում, և \$65,000՝ եթե օրենքը խախտելու նախորդ երկու կամ ավելի դեպքերը տեղի են ունեցել անցած յոթ տարվա ընթացքում:

Քաղաքացիական դատավարություն Դաշնային շրջանային դատարանում. Եթե կա՛մ Դուք, կա՛մ պատասխանողն ընտրում եք Ձեր բողոքի համար Դաշնային քաղաքացիական դատավարության գնալ, HUD-ը Ձեր գործը կիրարկման համար պետք է ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտ ուղարկի: ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտը Ձեր անունից քաղաքացիական դատական հայց կներկայացնի վկայակոչված խտրականությունը տեղի ունեցած շրջանի՝ ԱՄՆ շրջանային դատարանում: Դուք կարող եք նաև ընտրել միջամտել գործին և պահպանել Ձեր սեփական փաստաբանին: Դուք կամ պատասխանողը կարող եք երդվալ առենականների դատավարություն պահանջել, և ձեզանից յուրաքանչյուրն իրավունք ունի անձամբ ներկայանալու,

ներկայացված լինելու իրավախորհրդատուի միջոցով, ներկայացնելու ապացույցներ, իրականացնելու խաչաձև առերեսումներ և ապացույցներ բացահայտելու նպատակով ծանուցագրեր խնդրելու: Եթե Դաշնային դատարանը որոշում կայացնի հոգուտ Ձեզ, Դատավորը կամ երդվյալ ատենակալները կարող են պատասխանող(ներ)ին հարկադրել՝

- Փոխհատուցել Ձեզ իրական գասաների համար, ներառյալ՝ վատնված ծախսերի և հոգեկան ապրումների գասաները:
- Տրամադրել մշտական դատական օգնություն:
- Տրամադրել համապատասխան արդար օգնություն (օրինակ՝ բնակարանը Ձեզ համար մատչելի դարձնել):
- Վճարել Ձեր փաստաբանի ողջամիտ վճարը:
- Վճարել Ձեր կրած գասաների համար՝ որպես պատժիչ միջոց:

Ոչ ողջամիտ պատճառի որոշում և մերժում/արձակում. Եթե HUD-ը գտնի, որ ողջամիտ պատճառ չկա հավատարու, որ պատասխանող(ներ)ը խախտել է/են օրենքը, ապա՝ HUD-ը Ոչ ողջամիտ պատճառի որոշմամբ կփակի Ձեր բողոքը: HUD-ը Ձեզ և պատասխանող(ներ)ին բողոքը չքննելու մասին կծանուցի փոստով, Դուք կարող եք Հետաքննության վերջնական հաշվետվության օրինակ խնդրել:

Ոչ ողջամիտ պատճառի որոշման վերանայումներ. Արդար բնակարանային ապահովման մասին օրենքը HUD-ի կողմից չքննված բողոքների համար տրամադրում է ոչ պաշտոնական բողոքարկման գործընթաց: Սակայն, եթե Ձեր բողոքը փակվել է (չի քննվել) Ոչ ողջամիտ պատճառի որոշմամբ, ապա Դուք կարող եք վերանայման գրավոր խնդրանք ներկայացնել՝ Տնօրենին, (Արդար բնակարանային և հավասար հնարավորության իրականացման գրասենյակ) FHEO Office of Enforcement, U.S. Department of Housing and Urban Development, 451 7th Street, SW, Room 5206, Washington, DC 20410-2000.

Ի ՀԱՎԵԼՈՒՄՆ

Դուք կարող եք Մասնավոր Հայց Ներկայացնել. Դուք կարող եք մասնավոր քաղաքացիական հայց ներկայացնել՝ առանց նախապես HUD-ին բողոք ներկայանելու: Դուք պետք է Ձեր հայցը ներկայացնեք վկայակոչված խտրականության ամենավերջին դեպքի ամսաթվից երկու (2) տարվա ընթացքում:

Եթե Դուք, այնուամենայնիվ, HUD-ին բողոք եք ներկայացրել և եթե նույնիսկ HUD-ը չի քննել (փակել է) Ձեր բողոքը, Արդար Բնակարանային Ապահովման մասին օրենքը Ձեզ հնարավորություն է տալիս Դաշնային Շրջանային Դատարանում մասնավոր քաղաքացիական հայց ներկայացնել ընդդեմ պատասխանող(ներ)ի: Ժամանակահատվածը,



ԱՐԴԱՐ ԲՈՒՎԱՐԱՆԱՅԵՐ ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՅԻՆ ՀԱՄԱՐԱՐ ԻՆՏԵՐՎԵՅՈՒՄՆԵՐԻ ԽԱՄԱՐ

որի ընթացքում HUD-ը քննում է Ձեր բողոքը, չի հաշվվում որպես բողոքի ներկայացման 2-ամյա ժամանակահատված: Ձեր հայցը Դուք պետք է ներկայացնեք Ձեր սեփական ծախսերով, սակայն, եթե Դուք չեք կարող Ձեզ թույլ տալ փաստաթղթեր վարձել, Դատարանը կարող է Ձեր համար նշանակել այդպիսին:

Նույնիսկ եթե HUD-ը դեռքնում է Ձեր բողոքը, Դուք կարող եք մասնավոր քաղաքացիական հայց ներկայացնել ընդդեմ պատասխանողի, քանի դեռ (1) Դուք չեք ստորագրել HUD-ի Հաշտեցման Համաձայնագիրը՝ Ձեր HUD-ի բողոքը լուծելու համար, կամ (2) HUD-ի Վարչական իրավունքի դատավորը չի սկսել Ձեր բողոքի վարչական լուծմանը:

Բնակարանային խտրականության դեմ պայքարելու այլ գործիքներ.

- Եթե Վարչական իրավունքի դատավորի հրամանի հետ անհամապատասխանություն կա, HUD-ը կարող է ժամանակավոր օգնություն, հրամանի կիրարկում կամ զսպող հրաման փնտրել Միացյալ Նահանգների Վերաքննիչ դատարանում:
- Գլխավոր դատախազը կարող է Դաշնային շրջանային դատարանում դատական գործ բացել, եթե ողջամիտ պատճառ կա կարծելու, որ բնակարանային խտրականության ձև և գործելակերպ է տեղի ունենում:



Ինչո՞ւմ է

ԱՐԴԱՐ ԲԱՎԱՐԱՆԱՅԻՆ ԱՊՏԱՆՎՈՒՄ Հավասար հնարավորություն բոլորի համար



Նշում է

ԱՐԴԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊՍԶՈՎՈՒՄ Հավասար հնարավորություն բոլորի համար



Ի՞նչում է

ԱՐԴԱՐ ԲԱՎԱՐԱՆԱՅԻՆ ԱՊՏԱՆՈՎՈՒՄ Հավասար հնարավորություն բոլորի համար



Նշում է

ԱՐԴԱՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Հափասար հնարավորություն բոլորի համար

Լրացուցիչ տեղեկությունների համար

Այս գրքույկի նպատակն է ամփոփել արդար բնակարանային ապահովման Ձեր իրավունքները: Արդար բնակարանային ապահովման մասին օրենքը և HUD-ի կանոնակարգերն ավելի մանրամասն և տեխնիկական տեղեկություններ են պարունակում: Եթե օրենքի կամ կանոնակարգերի օրինակի կարիք ունեք, կապվեք Ձեզ ամենամոտ գտնվող HUD-ի արդար բնակարանային ապահովման գրասենյակի հետ: HUD-ի արդար բնակարանային ապահովման գրասենյակների ցանկին ծանոթացեք 7-10 էջերում:




ԿԱՊՎԵՔ HUD-Ի ՀԵՏ



Բնակարանային և քաղաքային զարգացման դեպարտամենտ

Room 5204

Washington, DC 20410-2000



02305

HUD-1686-1-FHEO

2011

Խնդրում ենք այցելել մեր վեբկայք՝ www.hud.gov/fairhousing

